

**ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱԶԱՆ ՀԱՅՐԸ ԿՐ ՀԱՆԴԻՍԱՊԵՏԷ  
ՎԷՆ ՆԱՅԻՍ ՍՈՒՐԲ ՊԵՏՐՈՍ ՀԱՅՑ. ԵԿԵՂԵՑԻՈՅ  
ՍՈՒՐԲ ՊԱՏԱՐԱԳԻ ԱՐԱՐՈՂՈՒԹԵԱՆ ԵՒ Ս. ՆԵՐՍԷՍ ՇՆՈՐՀԱԼԻ ՇՔԱՆՀԱՆՈՎ  
ԿՐ ՊԱՐԳԵԼԱՏՐԷ ԲՐՇ. ԵՓՐԵՄ ՍՐԿ. ԵՓՐԵՄԵԱՆԸ**

Կիրակի, Յուլիս 4ին, 2010, ՎԷՆ Նայսի Սուրբ Պետրոս Հայց. Եկեղեցւոյ մէջ Սուրբ Պատարագ մատոյց Ծուխին Հոգեւոր Հովիւ՝ Արժ. Տ. Շնորհք Աւագ Քինյ. Տէմիրճեան: Արարողութեան հանդիսապետեց եւ օրուան հոգեւոր պատգամը տուաւ Թեմակալ Առաջնորդ՝ Գերշ. Տ. Յովնան Արք. Տէրտէրեան: Այս առիթով, Առաջնորդ Սրբազան Հօր բարեխօսութեամբ, Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսը Բրշ. Եփրեմ Արկ. Եփրեմեանի երկար տարիներու անձնուէր ծառայութիւններուն իբրեւ գնահատանք զինք պարգեւատրեց Ս. Ներսէս Շնորհալի Շքանշանով: Նորին Սրբութեան Օրհնութեան եւ Գնահատութեան Գիրը կարդաց Տ. Շնորհք Աւագ Քահանայ Տէմիրճեան, իսկ Սրբազան Հայրը շքանշանով զարդարեց Բարեշնորհ Սարկաւազին կուրծքը եւ անդրադարձաւ անոր երկարամեայ հոգեւոր ծառայութեան:

**ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ ԳԻԾԵՐ ԲՐՇ. ԵՓՐԵՄ ՍՐԿ. ԵՓՐԵՄԵԱՆԻ**

Բրշ. Եփրեմ Արկ. Եփրեմեան ծնած է Պոլիս, Մարտ 15ին, 1930: Աւարտած է Սահակեան-Նունեան Վարժարանը: Աշակերտած է Պետրոս Մուրատեանի՝ Սամաթիոյ Սուրբ Գեորգ Եկեղեցւոյ մէջ: Որպէս ուսուցիչ ունեցած է նաեւ Գեղամ Գալանտէրեանը եւ ապա Տ. Սովսէս Քահանան:

Ֆէրիգիւղի Սրբոց Վարդանանց Եկեղեցւոյ մէջ չորս տարի աշակերտած է երաժշտագէտ Ներսէս Խուտավէրտեանին: 1949-1951 ծառայած է բանակի մէջ: Եղած է Սուրբ Գեորգ Եկեղեցւոյ երաժշտագէտը: 1955ին հաստատուած է Պէյրութ, Լիբանան, ուր Հաճընի Սուրբ Գեորգ Եկեղեցւոյ մէջ ծառայած է որպէս դասապետ:

1957ին անուսնացած է Լուսի Կէչեճեանի հետ եւ բախտաւորուած են 4 զաւակներով եւ 11 թոռնիկներով: Պէյրութի Սուրբ Սարգիս Եկեղեցւոյ մէջ ծառայած է նոյնպէս որպէս դասապետ եւ ապա մինչեւ 1985 թուական՝ եղած է դասապետը Թիրոյի Սրբոց Վարդանանց Եկեղեցւոյ: 1985 թուականին հաստատուած է Ամերիկայի Միացեալ Նահանգներու Գալիֆորնիա Նահանգին մէջ եւ այդ թուականէն ի վեր որպէս երաժշտագէտ եւ շարականագէտ՝ ամենայն ձեռնհասութեամբ եւ նուիրումով կը կատարէ ՎԷՆ Նայսի Սուրբ Պետրոս Հայց. Եկեղեցւոյ դասապետի պարտականութիւնը: